

## Դաս 2. Իրավիճակի վերլուծություն

### Նպատակ.

Այս դասի վերջում ուսանողները կգիտենան

- ի՞նչ բան է իրավիճակի վերլուծությունը
- ինչու՞ է այն փեղի ունենում (նպատակը)
- ինչպե՞ս է այն կատարվում (գործընթացը)
- հաջող պլանավորման համար ի՞նչ փեղեկություններ են հարկավոր:

**Իրավիճակի վերլուծությունը** (այլ կերպ անվանվում է նաև «կարիքների գնահատում», «համայնքի վերլուծություն», «միջավայրի գնահատում») Դաս 1-ում քննարկված պլանավորման ընդհանուր մոդելի քայլերից մեկն է:

Այսփեղ վերնագիրն ինքնին խոսում է. իրավիճակի վերլուծությունը ընթացիկ կացության վերլուծությունն է: Այն ներառում է ներկա առողջական վիճակի վերաբերյալ փեղեկությունների հավաքում, վերլուծում, գնահատում և փաստագրում: Պլանավորման համար (ինչ մակարդակի էլ այն լինի՝ պետական, շրջանային, մարզային թե համայնքային) միշտ անհրաժեշտ է ունենալ փիրող ելակերպային իրավիճակի մասին հստակ և լայն պարկերացում:

Ներկաբար՝ իրավիճակի վերլուծության նպատակը փիրող կացության ըմբռնման համար լայն հիմք ստեղծելն է: Այն արվում է հետևյալ նպատակներով.

- Պլանավորման հետագա գործընթացի համար ստեղծել ընդհանուր փեղեկարվական-մեկնարկային հիմք, որի վրա հնարավոր կլինի հիմնվել և հղում կատարել:
- Պլանավորմանն առնչվող առաջնահերթությունների դաշտի որոշմանն օգնող փեղեկություն քրամադրել:
- Փաստագրել առկա իրավիճակը:

Իրավիճակի վերլուծությունը կազմված է հետևյալ չորս քայլերից (փուլերից).

1. Որոշել, թե ի՞նչ փեղեկարվություն է պետք հավաքել,
2. Նավաքել այդ փեղեկարվությունը,
3. Վերլուծել հավաքված փեղեկարվությունը, և
4. Կազմել գեկույց-փաստագիրը:

### 1. Ի՞նչ փեղեկարվություն հավաքել

Պլանավորման գործընթացում ճիշտ որոշումներ կայացնելու համար, հարկավոր է ունենալ փեղեկություն: Որոշ հեղինակներ այն անվանում են «պլանավորման գործընթացի կենսական արյունը»: Դուք հավանաբար ծանոթ եք փեղեկության մասին մեկ այլ արտահայտության՝ «փեղեկությունը հզորություն է», ինչը նշանակում է, որ փարբեր փեսակի փեղեկություններին հասու ու ծանոթ անձնավորությունը որոշման կայացման գործընթացում առավել ազդեցիկ դիրք ունի: Միաժամանակ անհրաժեշտ է մտապահել, որ պետք է հավաքել միայն պլանավորման գործընթացին առնչվող և կարևոր փեղեկություն: Այլապես հեշտությամբ կարելի է ընկնել մարտչելի լայնածավալ փեղեկարվության թակարդը:

Նարց է ծագում. **պլանավորման համար ի՞նչ տեղեկություններ պետք է հավաքել** (իրավիճակի վերլուծության առաջին քայլը):

Դա կախված է բազմաթիվ գործոններից, որոնցից ամենակարևորները սպորտ թվարկված են.

- 1) Ուլքե՛ր են պլանավորման մասնակիցները
- 2) Առողջության և առողջապահության համակարգի ո՛ր սահմանման (գույր բժշկակա՞ն, թե՛ համալիր) կողմնակից են նրանք
- 3) Ի՞նչ տեսակի (վավերական, իրագործելի) տեղեկություն կա մեր տրամադրության տակ
- 4) Ի՞նչ մակարդակի պլանավորում պետք է կատարվի (ամբողջ երկրի՞ թե՛ օրինակ, համայնքի մակարդակով)

Առհասարակ, իրավիճակի վերլուծության համար անհրաժեշտ տեղեկություններն առնչվում են հետևյալ երեք լայն ոլորտների հետ.

- ա) առողջական վիճակ և առողջապահական կարիքներ
- բ) առողջապահական ծառայություններ և ռեսուրսներ
- գ) քաղաքականություն և քաղաքական միջավայր

Մանրամասն քննարկենք դրանցից յուրաքանչյուրը

#### **Ա. Առողջական վիճակը և առողջապահական կարիքները**

Որևէ իրավիճակի վերլուծության մեկնակետը հետազոտվող բնակչության (լինի դա ամբողջ երկրի թե առանձին տարածքի բնակչություն) մասին տեղեկությունն է: **Առողջական վիճակի** նկարագրությունը ներառում է նկարագրական տեղեկություններ հետևյալ ընդարձակ թեմաների վերաբերյալ.

ա) *Ժողովրդագրական (դեմոգրաֆիկ) տեղեկություն*, որը լուսաբանում է հետևյալ կետերը.

- բնակչության բացարձակ քանակը և բաշխումը
- կենսական ցուցանիշներ՝ ծնելիության, մահացության և պոդաբերության
- ներգաղթի և արտագաղթի ցուցանիշներ,
- բնակչության ընդհանուր աճի ցուցանիշ,
- տարիքային և սեռային տարաբաշխումը.

բ) *համաճարակաբանական տվյալներ*, որոնց թվում՝

- հիվանդացության ցուցանիշներ - ըստ հիվանդության և ըստ հիվանդացածների խմբերի (օրինակ՝ տարիք, սեռ, դասակարգ, ազգային պատկանելիություն, բնակավայր՝ գյուղական/քաղաքային),
- մահացության ցուցանիշներ (մանրամասները՝ ինչպես հիվանդացության ցուցանիշների համար),
- հաշմանդամության ցուցանիշներ,
- հավանական վրանգի (ռիսկի) գործոններ, և այլն.

գ) *առողջության պահպանման պայմաններ և ապրելակերպ*.

- ջրամատակարարում,
- կոյուղի և աղբահանում,
- բնակարանային-տնային պայմաններ,

- երեխաների կերակրման նկատմամբ մոտեցումներ և սովորություններ,
- ախտավարակների փոխանցողների վերահսկում:

Իսկ **առողջապահական կարիքների** մասին տեղեկությունը պետք է ներառի հետևյալը.

ա) *կարիքներ՝ ըստ բժշկական պատկերացման.* հիմնված են բժշկական ցուցանիշների (համաճարակաբանական տվյալների) վրա, որոնք սրացվել են համայնքում կատարված առողջության ուսումնասիրություններից, հիվանդների բժշկական քարտերից կամ բխում են առողջապահության աշխատողների մասնագիտական կարծիքներից :

բ) *կարիքներ՝ ըստ համայնքի ընկալման,* որոնք շարքավելի դժվար են որոշվում, հատկապես ամբողջ երկրի մակարդակով, և հաճախ արտահայտվում են ոչ թե առողջության ցուցանիշների, այլ առողջապահական ծառայությունների թերությունների ձևով: Կարիքի մասին համայնքի ընկալումներն, առավել հաճախ, ավելի դժվարամասշտաբի և վարձնակերպված են լինում: Մովորաբար, այդ տեղեկությունները սրացվում են իրենց առողջապահական կարիքների մասին համայնքի անդամների կարծիքների և վերաբերմունքի ուսումնասիրություններով, սոցիոլոգիական հարցումներով, բայց կարող են նաև սրացվել գործող համայնքային կառույցներից (ինչպես օրինակ գյուղական առողջապահական հանձնաժողովներից), կամ, իհարկե, ամբողջ երկրի մակարդակով՝ ժողովրդագրական տեսանկյունից ներկայացուցչական համարվող կառույցներից:

Իրավիճակի վերլուծության համար սկզբունքային նշանակություն ունեցող տեղեկատվության հաջորդ դասը վերաբերում է «թիրախային բնակչությանը» փրամադրվող **առողջապահական ծառայություններին և ռեսուրսներին:**

#### **Բ. Առողջապահական ծառայությունները և ռեսուրսները**

Առողջապահական ծառայությունների և ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունը ներառում է տվյալների հետևյալ ենթախմբերը.

ա) *Մարդկային ռեսուրսներ*

- պեղական առողջապահության ոլորտում աշխատող անձնակազմի թիվը,
- պեղական ոլորտից դուրս գործող առողջապահական աշխատողների թիվը,
- պեղական և ոչ-պեղական առողջապահության ոլորտների միջև աշխատողների կանխադասվող տեղափոխությունների թիվը,
- ուսուցումից (վերապատրաստումներից) ակնկալվող արդյունք,
- կանխադասվող կորուստներ ծառայությունից,
- փարաբաշխումն ըստ փարիքի և սեռի,
- փարաբաշխումն ըստ բնակավայրի (գյուղական/ քաղաքային)
- աշխատակազմի ընթացիկ և ակնկալվող բացեր.

բ) *Պինակական և նյութական ռեսուրսներ* (շենքեր, հողափարածություն, սարքավորումներ, փոխադրամիջոցներ և այլն)

- փեսակը,
- փարողությունը, հզորությունը
- փեղակայումը,
- սեփականատիրությունը (ո՞ւմ է պատկանում),
- վերանորոգման վիճակը,
- այլ միջոցների (օրինակ՝ դեղերի) մատակարարման խոչընդոտներ:

գ) *Ֆինանսական միջոցներ*

- առողջապահական ծախսեր (համախառն ներքին արդյունքի (ՆՆԱ) փոկոս)
- առողջապահության բյուջեի հարաբերակցությունն ընդհանուր ծախսերին
- պեղական ծախսերի հարաբերակցությունը մասնավորին
- առողջապահության ֆինանսավորման ընթացիկ և հնարավոր աղբյուրներ
- սղաճի ակնկալվող չափ:

դ) *Ծառայությունների օգտագործման վիճակագրություն*

- հաճախման ցուցանիշներ և կատարված կանխարգելիչ միջամտությունների քանակ (օրինակ, պարվաստման ընդգրկումներ, ընդհանրի պլանավորման կիրառողներ, խմելու ջրի պաշարպանված աղբյուրներ, հորատի պարաններ և այլն),
- հիվանդանոցների զբաղվածության ցուցանիշներ, հիվանդանոցից դուրսգրումներ, հիվանդանոցային բուժման փրկություն:

ե) *Ընդգրկողականությունը*

- սնուցման կենտրոններում սպասարկվող թերի քաշ ունեցող երեխաների համամասնությունը (proportion)
- պարաստված անձնակազմի օգնությամբ փեղի ունեցող ծննդաբերությունների մասնաբաժինը, և այլն.

զ) *Ծառայությունների բացեր*

- ծառայությունների հայրնի բացեր (հիմնական հաստատությունների կողմից չսպասարկվող փարածքներ),
- բնակչության փոփոխությունների, առողջապահական նոր կարիքների, ծառայության առաջադրվող չափորոշիչների փոփոխության հետևանքով ակնկալվող նոր բացեր.

է) *Արժեքներ (ծախսեր) և գանձումներ/վճարման աղբյուրներ*

- յուրաքանչյուր պարվաստման ինքնարժեք,
- անվճար ծառայություններ, սպառողից գանձվող վճարներ.

ը) *Առողջապահական ծառայությունների կազմակերպչական կարգավորումը*

- որոշումների կայացման գործընթացի կենտրոնացվածության աստիճանը,
- այլ ոլորտների հետ կապի և համայնքի մասնակցության աստիճանը և հնարավորությունները.

թ) *Ծառայությունների արդյունավետությունը, օգտավետությունը և բուրդին հավասար մատուցման հնարավորությունը*

Դաս 5-ում կանդրադառնանք վերոհիշյալ կետերին և կխոսենք «ծախսարդյունավետության», «ծախս-օգուտ վերլուծության» և այլնի մասին):

#### **Գ. Քաղաքականություն և քաղաքական միջավայր**

Իրավիճակի վերլուծության համար անհրաժեշտ փեղեկավորության երրորդ ընդարձակ ոլորտն առնչվում է ընդհանուր միջավայրին: Այն ներառում է փեղեկություններ հետևյալի վերաբերյալ.

- քաղաքական միջավայր. պետական քաղաքականություն (առողջապահական և ոչ-առողջապահական), քաղաքական միջավայր, շահագրգռված խմբեր, և այլն
- մշակութային առանձնահատկություններ
- բնակչության առողջապահական գիտելիքներ, վերաբերմունք, պահվածք, մոտեցումներ
- սոցիալ-տնտեսական պայմաններ
- աշխարհագրական և տեղագրական միջավայր
- կրոնական առանձնահատկություններ
- ենթակառուցվածք՝ փոխադրամիջոցներ, կապ, կենցաղ-սպասարկման ոլորտ (ջուր, գազ, էլեկտրականություն, ջեռուցում)
- ոչ-առողջապահական ոլորտ. օրինակ՝ կրթության, գյուղատնտեսության ոլորտների կողմից մատուցվող և այս ոլորտների համար նախատեսվող ծառայություններ:

## 2. Տեղեկատվության հավաքում

Այսպիսով, մենք ունենք ընդհանուր պարկերացում այն մասին, թե իրավիճակի վերլուծության համար ինչպիսի տեղեկատվություն պետք է հավաքվի: Այժմ տեսնենք, թե որո՞նք են այդ տեղեկատվության հիմնական աղբյուրները, այսինքն՝ որտեղ այն կարող է ձեռք բերվել (այս դասի սկզբում մենք մասամբ հիշատակել ենք որոշ աղբյուրներ): Փորձենք կազմել դրանց ընդհանուր մի ցանկ: Այն հաստատարապես կընդգրկվի՝

- Մարդահամարներ
- Կենսական փվյալների գրանցման համակարգեր
- Կառավարական հաշվետվություններ, (զեկույցներ)
- Ոչ-կառավարական հաշվետվություններ (զեկույցներ)
- Մասնագիտական միավորումներ
- Բուժման մատենավարություն
- Նարցոմներ (ազգային, փարածքային, համայնքային)
- Պլանավորման նպատակով հավաքված այլ փվյալներ (ինչպես որակական, այնպես էլ քանակական բնույթի նախաձրագրված հետազոտություններ)
- Փորձագետներ

Նախորդող քննարկումը նվիրված էր պլանավորման գործընթացի համար պահանջվող տեղեկատվության ամենախոշոր մասերին:

## 3. Նավարկված տեղեկատվության վերլուծություն

Իրավիճակային վերլուծության երրորդ քայլը (հավաքվելիք տեղեկատվությունը որոշելուց և բուն հավաքագրումն իրականացնելուց հետո) տեղեկատվության վերլուծությունն է: Այն պետք է ընդգրկվի՝

- իրավիճակի մեկնաբանություն,
- առանցքային հիմնախնդրի դաշտի որոշում,
- հիմնախնդրի պատճառների վերլուծություն:

Ներկա իրավիճակի մանրամասն, սպառիչ նկարագրությունը վճռորոշ է առաջնահերթությունների և ձեռնարկվելիք քայլերի հետագա ճիշտ ընտրության համար: Այդպիսի մեկնաբանությունը պետք է

- (1) ընդգծի առանցքային հիմնախնդիրների դաշտերը (սոցիալական հիմնախնդիրներ, մահացություն, հիվանդություններ, վաթնամյակներ, և այլն) և
- (2) բացահայտի այդ խնդիրները ծնող անմիջական, նպաստող (պայմանավորող) և հիմնային պարճառները:

*Անմիջական պատճառները* հիմնախնդրի ուղղակի պարճառներն են: Նամապարասխան միջոցառումներն այս դեպքում, սովորաբար (ա) գործում են անհարակա մակարդակի վրա, (բ) կայուն և փրկական արդյունքի հասնելու համար պետք է կրկնվեն: Դրանք բերում են խնդրի կարճաժամկետ լուծմանը:

*Նպաստող (պայմանավորող) պատճառների* թվում են համոզմունքները, վերաբերմունքը, վարքագծերը, առողջապահական և կրթական ծառայությունների օգտագործման աստիճանն ու ընդգրկողունակությունը, ջրամաքակարարումը, և այլն, ավելի ճիշտ՝ դրանց անբավարարությունը, անհամապարասխանությունը կամ պակասը: Այս պարճառների դեմ կարող է անհրաժեշտ լինի գործել հասարակության որևէ մակարդակի վրա (փնային, փեղական, շրջանային, կենտրոնական):

*Պննային (կառուցվածքային) պատճառներն* առնչվում են երկրի կառուցվածքին, սոցիալական և սոցիալ-մշակութային գործոններին, պետության կառուցվածքին և դերին, մակրոփոփոխությանը:

Իրավիճակի վերլուծությունը պետք է նաև

- (3) փորձի համապարասխանեցնել ներկա և նախատեսվող առողջապահական կարիքները ներկա ծառայությունների մարուցմանը, և
- (4) վեր հանի հավանական բացերը՝ թե՛ ծառայությունների և թե՛ միջոցների, ռեսուրսների առումով, ինչպես նաև
- (5) մեկնաբանություններ անի ներկայիս առողջապահական ծառայությունների մարուցման արդյունավետության ու հավասարության մասին:

Ի հավելումն այս ամենի, իրավիճակի վերլուծությունը պետք է

- (6) կենտրոնանա առողջապահության և այլ ոլորտների փոխհարաբերությունների վրա, և, անհրաժեշտության դեպքում,
- (7) քննարկի առողջապահության ոլորտի ներկա կազմակերպչական կարգավորման նպատակահարմարությունը:

#### 4. **Տեղեկությունների փաստագրում**

Իրավիճակի վերլուծության վերջնակետը (չորրորդ քայլը) **փաստաթղթի կազմումն** է: Այն պիտի ծառայի (1) պլան(ներ)ի կազմման համար, (2) առողջապահության ոլորտի աշխատակիցներին՝ որպես կարարված աշխատանքի հետադարձ արձագանք, (3) որպես մեկնակետային փաստաթուղթ, (4) առողջության վերաբերյալ կարևոր փեղեկություններ հանրությանը ծանուցելու համար (գաղափարներին և ծրագրերին օժանդակություն ստանալու ակնկալիքով):

Իրավիճակի վերլուծությունն իրականացնելու համար պետք է ներգրավված լինեն հերևյալ շահագրգիռ կողմերը.

- առողջապահության պլանավորողներ
- առողջապահության մասնագետներ և ծառայությունների ղեկավարներ
- առողջապահությանն առնչվող այլ ոլորտների ներկայացուցիչներ

- համայնքի ներկայացուցիչներ

Այսպիսի թիմային մոտեցումը կապահովի յուրաքանչյուր խմբի փեսակետների ներգրավվումը, և նախնական քայլ կհանդիսանա՝ ապահովելու խմբերի օժանդակությունը վերջնական պլանին:

Իրավիճակի վերլուծության ավարտին հաջորդում է առաջնահերթությունների, նպատակների և խնդիրների սահմանումը, ինչպես նաև ռազմավարության գնահատումը:

## Նարցեր

### 1. **Իրավիճակի վերլուծությունը կազմված է հետևյալ փուլերից.**

- 1) Որոշել, թե ի՞նչ փեղեկավորություն պետք է հավաքել
- 2) Նավաքել այդ փեղեկավորությունը
- 3) Վերլուծել հավաքված փեղեկավորությունը, և
- 4) Կազմել գեկույց-փաստաթուղթը

Ճիշտ Սխալ

Պատասխան՝ Ճիշտ. Տես էջ 1

### 2. **Ո՞րն է, ըստ որոշ հեղինակների, «պլանավորման գործընթացի կենսական արյունը»:**

- ա) փեղեկավորություն
- բ) վերլուծություն
- գ) փորձագետներ

Պատասխան՝ ա) փեղեկավորություն: Տես էջ 1.

### 3. **Իրավիճակի պարզած վերլուծություն կատարելու համար պետք է հավաքել հետևյալ երեք լայն ոլորտներին առնչվող փեղեկավորություն.**

- ա) առողջական վիճակ և առողջապահական կարիքներ
- բ) առողջապահական ծառայություններ և ռեսուրսներ
- գ) քաղաքականություն և քաղաքական միջավայր

Ճիշտ Սխալ

Պատասխան՝ Ճիշտ: Տես էջ 2

### 4. **Պատճառների ո՞ր խմբին են պատկանում համոզմունքները, վերաբերմունքը, վարքագծերը, առողջապահական և կրթական ծառայությունների օգտագործման աստիճանն ու ընդգրկողունակությունը:**

Նշել մեկ պատասխան.

- ա) անմիջական պատճառներ
- բ) նպաստող (պայմանավորող) պատճառներ

գ) հիմնային (կառուցվածքային) պարճառներ

Պարասխան՝ բ) նպաստող (պայմանավորող) պարճառներ : Տես էջ 6

**5. Որպես իրավիճակի վերլուծության արդյունք ստեղծված փաստաթուղթը կարող է օգտագործվել**

ա) պլան(ներ)ի կազմման համար

բ) առողջապահության ոլորտի աշխատակիցների համար՝ որպես կապարված աշխատանքի հեղադարձ արձագանք,

գ) որպես մեկնակերպային փաստաթուղթ,

դ) առողջության վերաբերյալ կարևոր տեղեկություններ հանրությանը ծանուցելու համար (գաղափարների և ծրագրերի համար օժանդակություն ստանալու համար):

Ճիշտ Սխալ

Պարասխան՝ ճիշտ: Տես էջ 6